

«Այս ազգային տեղեկութիւններէն զատ՝ հետեւեալն ևս Պարսից հոգեորականութեան համար աւելորդ չեմք համարիլ ի հրատարակութիւն,

«... Ասոնց (Պարսից) հոգեորականութիւնը պաշտօնական դասակարգութիւն չունի, այլ անձին արժանեօքն է։ Միայն Քեյլէշէյ կոչուած ուխտատեղին նստող հոգեորականը ամենէն զըլտի կհամարուի։ հոգեորականաց այս դիրք շատ դժուար է կառավարութեան համար, շատ նեղութիւն կբաշէ։ Այժմ... երկու մեծ հոգեորականը կան, միոյն խոմ ծառայ կատար, որ Ուլէշէի իմամն (կարդացող կամ օրէնագէտ) է։ աս որդւոց որդի է և թագաւորական հրովարտակով հաստատուած է, բայց չունի կետրոնականութիւն՝ բոտ որում անձին արժանեօքն լինել վերե գրեցի քեզ, — և դեռ 30 տարեկան չկայ։ Իսկ միւսն սրբազան անձ համարուել է Պարսից մէջ, և նորա վճիռը յարգելի են։ սա կկոչուի Ուշտ Քէշ։ Սէիտ բառը իւրեանց մարգարէի սերնդոց տիտղոսն է՝ սոքա խիստ շատ են, որոց մէջ աշխարհական կարգէ անձինք ևս կան։ սոցա նշանն է կանաչադոյն և կապոյտ փաթկոց կամ գօտի։»

ՄՈՎՍԷՍ ՆԵՐՍԷՍԵԱՆՅԻ ՎԱՆՃԱՆԻԼ.

Մի հասարակութիւն որչափ որ բաղտաւորվում է իւր նիւթապէս և բարոյապէս պիտանացու անդամների բազմանալով, նոյնչափ ևս անբաղտանում է նա այնպիսիներից զրկուելով։

Մի այսօրինակ անբաղտութեան ենթարկուեց մօտ օրերս մեր Շամախուց Հայ հասարակութիւնը որը ոչ սակաւ ցաւալի և կսկծալի եղաւ, զրկուելով իւր մի այնպիսի աղնիւ և պիտանացու Անդամից որ իւր կազմութեան մէջ նշանաւոր տեղ էր բռնում իւր եկեղեցատէր և ազգատէր ազնուաբարոյութեամբը։ Սա էր պատուաւոր քաղաքացի Իշխան Մովսէս Ներսէսեանցը, որ կէքից իւր երկրաւոր կեանքը ամառայ 12ին յետ կեսաւոր 2րդ ժամին։

Ես սորան իշխան անուանեցի, ընթերցող, ոչ այն հասարակեալ սովորութեամբ, որով անուանվում են շատ մարդիք իւրեանց անպէտք դրամաւոր հարստութեան համար, այդ հակառակ է իմ գաղափարին, այլ նորա բարոյական հարստութեան համար, որ ունէր նա նիւթականի հետ միասին և որոնք բաշխում էր նա անխնայ մեր ազգի և եկեղեցւոյ բարոյական և նիւթական շինութեան համար։ Սորա ծննդատեղին լինելով Շամախուց 56 վերստ հետի գտնուած Գիրք գիւղը, ուստի և այն տեղ անցուցած լինելով իւր մանկութեան օրերը և երիտասարդութեան ժա-

մանակի մի մասը՝ անյայտ են ինձ դորա կեանքի այդ ժամանակամիջոցի գործերը՝ միայն սորանից 45 տարի յառաջ դորա այս քաղաքը գաղթելուց զինի յայտնի և նշանաւոր է եղած դա ոչ միայն Շամախում այլ և Ռուսաստանի երեւելի քաղաքներում գտնուած թէ մերազնեից և թէ օտարազգացը իւր խաղաղատէր կենցաղաւարութեամբ և անհատական բարի և աղնիւ յատկութիւններով։ Գորա անխնայ և բարեկամատեղ գործունէութիւնը հասուցել է դորան նշանաւոր նիւթական հարստութեան, իսկ դորա մարդասիրական եկեղեցասիրական և ազգասիրական զգացմունքները և գործերը, որոնք արտափայլել են զանազան հանգամանքներում հասուցել են դորան «Հայ իշխան», անուան համբաւոյն և պատուին։ Բանի որ ես եղած եմ Շամախում չեմ կարողանում մտաբերել մի Հայկական ժողով կազմուած յօգուտ ազգի և եկեղեցւոյ, որին պարագլուխ անցած չլինէր բարեկիշատակ հանգուցեալը և իւր «Իշխան», անունը հաւատարմացրած չլինէր բանի և գործով օգտամատոյց լինելով հասարակութեան բարի ձեռնարկութեանը, իսկ նորա աստուածսիրութեան յայտնի և գլխաւոր ապացոյց կարող է լինիլ նորա 1850 թուին այս քաղաքում կառուցած փառաւոր ծառարը աստուծոյ իւր մեծ եղբոր արժանալիչատակ հանդուցեալ Պ. Պետրոս Ներսէսեանցի հետ միասին իւրեանց արգաւազատակ սեպհական ծախքով, իւրեանց վնահանքն բնաւորութեամբ արհամարհելով այն ամէն արգելքները, որոնք սովոր են պատահիլ շատ անգամ անախորժ հանգամանքներից։ Այս ամենի փոխարէն վարձատրուել էր նա Ամենաբարձրիւց լինելով հայր մի բարեկեանից քրիստոնիսի գերդաստունի որից աւելի երջանկութեան չէ կարող սպասիլ մահկանացու քրիստոնիայն այս աշխարհիս մէջ։ Թօղուածս չերկարացնելով պատմեմ դորա թաղման հանդէսը։ Այս հանդէսը կատարուեցաւ նորա մահուան հետեւեալ օրը փառաւոր կերպով, ինչպէս կիպիւրէր մի բարի մարդոյ և բարի քրիստոնէի մահուան համար։

Պատարագամատոյցն էր ինքը տեղւոյն Առաջնորդ Անդրեաս Արքեպիսկոպոսը, զինի պատարագին հօգեհանգստեան կարգը կատարելու ժամանակ եղաւ դամբանական ատենաբանութիւն։ Սուրա տխուր միանգամայն շքեղ յուղարկաւորութեանը մասնակից էին համարեայ քաղաքիս Հայ հասարակութիւնը, նոյնպէս և ոչ սակաւ օտարազգիք։ մինչև նորա զերեզմանը, որ պատրաստուած էր իւրաքէն տաճարի սրահում կից իւր հանգուցեալ եղբոր զերեզմանին, այս տեղ կարգացուեցաւ և մի դամբանական ճառ ի դիմաց մանուկների և պատանիների քաղաքիս զեպի իւրեանց բարեբար իշխանը, նոյն ամառ 16 նոյնպէս պատարագ մատուցաւ ի յիշատակ հոգւոյ հանգուցելոյն, զինի որոյ և մեծածախ հացիկորդ

Թեան հրաւիրուած էին քաղաքիս հայ հասարակութիւնը առհասարակ աղքատք և հարուստք:

Համախույ հասարակութիւնը զգումէ արդարեւ այս մեծակշիռ կորուստը բայց մի և նոյն ժամանակ յուսով է, որ այդ կորստեանը պէտք է փոխարինեն նորա հարազատ ժառանգների եկեղեցասիրական և ազգասիրական գործերը իւրեանց անմահ յիշատակ ծնողի յարգը և անուներ իրաւամբ իւրեանց ևս սեպհականելով:

Սորա կեանքը և մահը նկարագրելուս միակ նպատակն լինելով ցոյց տալ ընթերցողաց թէ այժմեան նոր հասարակութիւնը որպիսի իշխանին է զնահատում և որպիսի ոչ թէ նորա կենդանութեան ժամանակ և թէ մահից յետոյ: Խնդրումեմ փոքրիկ տեղի շնորհէք յօդուածիս պատուական Արարատ ամսագրոյ թերթերում:

ԱՆՎԱՆԻՐԻ ՄԵՆԻՒ ՀԱՅՆԱԿԱՐԵԱՆԵՅ.

Ի 21 Յուլի 1872 ամի.

Ի Շահի:

Ո՛ր և իցէ յօդուածոց ի պատասխան կամ ի քննութիւն ուղղեալ յօդուածները յատկապէս կ'սնդրեմք և ինչպէս արժան է՝ ուղղել այն լրագրաց՝ որոց մէջ հրատարակեալ են: Իսկ երբ չհրատարակուին, յայնժամ կ'արել է դիմել այլ լրագրաց: Այս անգամ բացառութեամբ միայն կ'ընթերցեմք հետեւեալին:

ՄԻ. ՔԼՆԻ ԽՕՍԻՔ

Ամեն մի մարդ իրաւունք ունի խօսելու, դատելու և գրելու, բայց չէ՞ որ այնպիսին և պիտի կենդանի խիղճ ունենայ, որ ամեն մի խօսուածք գրուածը նախ խղճի կրիտիկայի տակ զգէ և յետոյ յոյս աշխարհ զուրս բերէ: Եթէ ես ունիմ ձարտար լեզու, ինքս ել հնարապէտ, գրիչս ել սուր: Եթէ սուտ ել ասելու լինիմ այնպէս, որ բաց ի ինձանից ճշմարիտ խօսողն ել զարմանայ, եթէ մի անձնական կիրք ունիմ դէպի մի որ և իցէ անհատ, որ իմ բնութեան չի յարմարվել և չի յարմարում, մի՞թէ պիտի մեռցնեմ բնական օրէնքը ինձանում և ոտի տակ տամ մէկի երախտիքը կամ պատիւը, զոպարտելով նրան: Այդպէս վարուելով, ի՞նչ է արդեօք այդպիսի անհատի նպատակը. քրիստոնէական պարտաւորութիւն է կատարում, ազգասիրութիւն է ցոյց տալի, թէ իրան կամենում է ճանաչեցնել շատերի աչքում հասկացող անձն: Հատ լաւ բան է համբաւներ, ազգային յառաջդիմութեան լուրեր, տեղական աւանդութիւններ և այլն հրա-

տարակել լրագրերի միջոցաւ, եթէ մարդը խղճով լինի գրուածը և ոչ անձնական կիրքով: Գորանում մեղաւոր չէ և ոչ մի խմբագիր, եթէ տպուէ մի որ և իցէ աւանդութիւն կամ լուր, որ լինում են երբեմն կրքից շարժված ստացող բաներ, պատճառ, խմբագիրը չէ կարող ամեն տեղացի լինել կամ ծածկագէտ, որ կարողանայ իմանալ թէ ամեն բանի հանգամանքն, կամ գրողի սիրտը, միտքը, թէ արդեօք այս մարդը, որ խօսում է, ի՞նչ նպատակ ունի խօսելոյն և գրելոյն, և ստուգապէս է, թէ գրգռուած է, թէ վշտացած է, թէ մի հայածանք կրած է մի քանի կամ շատ անհատներից: Մէկը, որ կարողութիւն ունի խօսելու գրելու, մի՞թէ առանց դատողութեան խղճի մտաց պիտի անէ այն, ինչ որ միւսը չէր կարող անել իրան: մի՞թէ այնպիսին սովորել է հնարագիտութիւնը, որ իրանից տկար արդարին նուաճէ իւր կամքի տակ: Եթէ մէկը միւսի անբարոյական և անտեղի դատողութիւնների պատճառաւ կարողանում է միայն ներողամտաբար և անյիշատար կերպով յանդիմանել նորան կամ խրատել, մի՞թէ նա պէտք է որ, դարանակարութիւն պահէ իւր սրտում և թոյն ժանիքի տակ մինչև յարմար ժամանակը, որ ժայթքէ ի զուր առանց օգտի թունաւորելու նորան կամ միւսին, որովք երբ և իցէ մի ժամանակում խոցել են իրա սիրտը ճշմարիտ խօսքերով:

Մենք կարում ենք Յարէթ Առեկասի երբեմն Առեկասի տեղական աւանդութիւնների և բարբառների նկարագրութիւններ Մեղուի մի քանի համարներում իրրեւ Համախույց ուղարկված, որ վեց ամիս դրանից առաջ հայածված է ինքն Համախույց իրան յայտնի հանգամանքների պատճառաւ դէպ ի հեռաւոր տեղեր: Արախտում ենք, որ չի թագցնում իւր քանքարը, բայց եթէ ընդունէր, խորհուրդ կտայինք, որ փոխանակ իւր անմահները երկարացնելու լաւ բաներով, բաւականաւոր տակաւին տեսածով, Եթէ ես լինէի նորա մօտ կամ նա լինէր ինձ մօտ, ես խօսքով կ'սորհրդակցէի նորա հետ, և ոչ այսպէս:

Անբնապէս, թէ ուղորդ թէ սուտ լաւ է նկարագրում, պատճառ, այն խորանը (դաղը) որ նա է ստացել ինքն իրա անխոհեմ վարվողութեամբ Համախույցի շատերից, ուրիշ մէկ բանով չէ կարող վրէժխնդիր լինիլ, եթէ ոչ նոցա վատ կողմերը, վատ աւանդութիւնները իրանց երեսին տալով: Մի՞թէ չէիր կարողանում, Պ. Առեկաս, մինչև ձի նստելը մինչև հալածմունքի մէջ ընկնելը գրել այդ ճշմարտութիւնները. ո՞վ կարող էր արդեօք ձեռքդ բռնել: Հիմա գրում ես հեռուից ի՞նչ նպատակով, նրանց ուղղութիւն տալու, թէ վրէժդ առնելու. կարծեմ ջրաց ել մտած կ'լինէք դուք հետաքրքրութիւնից եւ զարմանում եմ, որ դու մինչև լարեկենդանի շաբաթները ջրաղացի մօտ բաւական օրեր ես